



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ
ՄԱՅԱԿԱՆ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ N8 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՈԱԿ
ՊՈԱԿ

ՀՀ ք.Գավառ, Հ.Արրահամյան 4/6

Էլ. փոստ gavar8@schools.am

№ 761

19.10.2022թ.

023

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ.

Ձեզ եմ ներկայացնում «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ կառավարման խորհրդի՝ 19.10.2022թ. N50 արձանագրությամբ ընդունված որոշումը՝ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

Կից ներկայացնում եմ դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ընդունած որոշման պատճեն:

Առդիր՝ 2 էջ

Դպրոցի ԿԻՍ քարտուղար՝

Ա. Խաչատրյան

ՔԱՂՎԱԾՔ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ կոլեգիալ կառավարման մարմնի՝ 2022 թվականի հոկտեմբերի 19-ի խորհրդի արտահերթ նիստի արձանագրությունից:

Խորհրդի սույն նիստը համարվում է իրավագոր, քանի որ նիստին մասնակցում են տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարած հաստատության՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի ընտրության ժամանակ ձայնի իրավունք ունեցող 9 (ինն) անդամներից՝ 6 (վեց) անդամները: Նիստը վարում է խորհրդի ավագ անդամ Ե. Խուրշուդյանը, արձանագրում՝ քարտուղար Ա. Խաչատրյանը:

Օրակարգում

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացման մասին հարցը (Զեկուցող՝ Ե. Խուրշուդյան):

Լսեցին 1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի անցկացման մասին հարցը: Զեկուցողը նշեց, որ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար 2022 թվականին հայտարարված նախորդ մրցույթներին տնօրեն չի ընտրվել: Ուստի խորհուրդը

Որոշում է՝

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարել մրցույթ:

2. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի փաստաթղթերն ընդունել 2022թ.նոյեմբերի 7-ից մինչև նոյեմբերի 25-ը ներառյալ:

3. Տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթն անցկացնել 2022թ. դեկտեմբերի 9-ին՝ ժամը 14:00-ին Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոցում(ք. Գավառ, Հ. Աբրահամյան 4/6):

Դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝

խորհրդի քարտուղար՝



Ա. Խաչատրյան

Հայտարարություն

Մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թ. նոյեմբերի 7-ից մինչև նոյեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. դեկտեմբերի 9-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար՝ հեռ.՝ 093304374, էլ. փոստ՝ gavar8@schools.am